Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-293-07.06.2022-ՏՀ-011

«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ստանդարտացման մասին» 2012 թվականի փետրվարի 8-ի ՀՕ-21-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի.

1) 7.1)-ին կետի «ընդունված» բառը փոխարինել «հաստատված» բառով.

2) 9)-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1)-ին և 9.2)-րդ կետերով.

«9.1) հիմնադրական ազգային ստանդարտ՝ Ստանդարտացման ազգային մարմնի կողմից ընդունված և գործողության մեջ դրված ազգային ստանդարտ, որով սահմանվում են ստանդարտացման աշխատանքներին վերաբերվող ընդհանուր դրույթներ, ինչպես նաև ազգային ստանդարտների տեսակները.

«9.2) այլ պետության ազգային ստանդարտ՝ այլ պետության ստանդարտացման ազգային մարմնի կամ կազմակերպության կողմից ընդունված և հանրությանը հասանելի ստանդարտ.»:

3) 10)-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) տեխնիկական պայմաններ՝ կազմակերպության ստանդարտի տեսակ, որով սահմանվում են տեխնիկական պահանջներ որոշակի արտադրանքի, աշխատանքի (գործընթացի), ծառայության նկատմամբ.».

4) 13)-րդ կետում «պետության» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերով.

5) 17)-րդ կետից հանել «Ստանդարտացման ամենամյա ծրագիրը ներառում է նաև պետական ամենամյա ծրագիրը և հաստատվում է ստանդարտացման խորհրդի կողմից:» նախադասությունը.

6) 17)-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 18)-րդ կետ.

«18) ստանդարտացման տեխնիկական խորհուրդ. ստանդարտացման ոլորտի մասնագետներից կազմված և Ստանդարտացման ազգային մարմնի տնօրենի հրամանով ձևավորվող խորհուրդ:»:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի.

1) 1)-ին կետում «ծառայությունների և գործընթացների» բառերը փոխարինել «ծառայության և գործընթացի» բառերով:

2) 2)-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) արտադրանքի, գործընթացի, ծառայության որակի և մրցունակության բարձրացման խթանումը, այդ թվում հայկական արտադրանքի.»:

3) 5)-րդ կետում «խոչընդոտների» բառից հետո լրացնել «նվազեցումը կամ» բառերը:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում.

1) 2)-րդ կետում հանել «մշակում և» բառերը, իսկ «ընդունում» բառից հետո լրացնել «և գործողության մեջ դնում» բառերը:

2) 6)-րդ կետում «(այդ թվում՝ եվրոպական)» բառերը փոխարինել «, տարածաշրջանային (այդ թվում՝ եվրոպական և միջպետական)» բառերով, իսկ «արդյունքների» բառը փոխարինել «ուղեցույցների» բառով:

3) 8)-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) գործողության մեջ դրված ազգային ստանդարտների և դրանց փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում Ստանդարտացման ազգային մարմնի պաշտոնական կայքում.»:

4) 9)-րդ կետում «տեխնիկական հանձնաժողովների» բառերից հետո լրացնել «կամ դրանց բացակայության դեպքում աշխատանքային խմբերի» բառերը:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «օրենքով» բառից հետո լրացնել «, հիմնադրական ազգային ստանդարտներով» բառերը:

Հոդված 5. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում «կիրառվում են» բառերից հետո լրացնել «միջազգային» բառը:

Հոդված 6. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման բնագավառում պետական քաղաքականությունը մշակում է լիազորված պետական մարմինը:»

Հոդված 7. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «ազգային մարմինը,» բառերից հետո հանել «տեխնիկական» բառը:

Հոդված 8. Օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածներում «լիազորված պետական կառավարման մարմին» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «լիազորված պետական մարմին» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 9. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում.

1) 1)-ին կետն ուժը կորցրած ճանաչել.

2) 3)-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում պետական ստանդարտացման ամենամյա ծրագիրը, ստանդարտացման աշխատանքների ցանկը.».

3) Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1)-ին կետ.

«3.1) Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում ամենամյա մրցանակներ սահմանելու և շնորհելու մասին կարգը»:

Հոդված 10. Օրենքի 10-րդ հոդվածի.

1) 1-ին մասում «սահմանվում է» բառերը փոխարինել «ճանաչվում է» բառերով.

2) 2-րդ մասի.

ա. 1-ին կետում «ստանդարտները» բառից հետո լրացնել «, դրանց փոփոխությունները, ուղղումները» բառերը.

բ. Լրացնել 2.1)-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1) ընդունում և գործողության մեջ է դնում հիմնադրական ազգային ստանդարտները.»

գ. 5)-րդ կետում «ստեղծում» բառից հետո լրացնել «, վերակազմավորում և լուծարում» բառերը.

դ. 8)-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) ստեղծում, վարում և արդիականացնում է ստանդարտացման փաստաթղթերի ազգային ֆոնդը.».

ե. 14)-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) կազմակերպում և իրականացնում է միջազգային և տարածաշրջանային ստանդարտների, տեխնիկական պայմանների, դրանց փոփոխությունների նախագծերի փաստաթղթային փորձաքննություն և հաշվառում. »

զ. 15)-րդ կետում «կանոնակարգող» բառից հետո լրացնել «կամ համակարգող» բառերը.

է. 17)-րդ կետում «վերջակետ» կետադրական նշանը փոխարինել «միջակետ» կետադրական նշանով:

ը. լրացնել 18)-րդ, 19)-րդ և 20)-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«18) հաստատում, հրապարակում և լիազորված պետական մարմին է ներկայացնում հաշվետվություն ստանդարտացման ամենամյա ծրագրի կատարման վերաբերյալ.

19) կազմակերպում է այլ պետությունների ստանդարտների հրապարակումը և տարածումը՝ այլ պետությունների ստանդարտացման կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերին (համաձայնագրերին) համապատասխան.

20) ստեղծում և հաստատում է ստանդարտացման տեխնիկական խորհրդի կազմն ու աշխատակարգը:»:

Հոդված 11. Օրենքի 11-րդ հոդվածում.

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Կառավարման խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) Ստանդարտացման ազգային մարմնի կառավարման մարմինն է, որը կազմված է Խորհրդի նախագահից և 9 անդամներից՝ ստանդարտացման և չափագիտության գերակա ոլորտներում ներգրավված պետական մարմիններում հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող և հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտի 5 և ոչ պետական կազմակերպությունների 4 ներկայացուցիչներից:»:

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ստանդարտացման ազգային մարմնի տնօրենը Խորհրդի քարտուղարն է: Խորհրդի քարտուղարը քվեարկության ձայնի իրավունք չունի և չի կարող հանդես գալ որպես Խորհրդի նախագահ:»:

3) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Խորհրդի նիստերի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի նիստերը կարող են անցկացվել նաև հեռավար՝ առցանց եղանակով: Հեռավար նիստերի ժամանակ քվեարկությունը կատարվում է էլեկտրոնային հաղորդակցման միջոցներով (առցանց): Նիստին ներկա անդամների ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:»:

4) 8-րդ մասի.

ա. 2)-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) հաստատում է Ստանդարտացման ազգային մարմնի աշխատանքային ծրագրերը.».

բ. 3)-րդ և 12)-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 12. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 4)-րդ կետում «ձևավորմանը» բառից հետո լրացնել «և ներկայացնում է առաջարկություններ» բառերը:

Հոդված 13. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 6)-րդ կետում «կազմակերպության ստանդարտները» բառերից հետո լրացնել «(տեխնիկական պայմանները)» բառերը:

Հոդված 14. Օրենքի 14-րդ հոդվածի.

1) 2-րդ մասից հանել «, ինչպես նաև դասակարգման օբյեկտների և դրանց ենթաբազմության կոդերի ու անվանումների հավաքածուներ» բառերը.

2) 4-րդ մասից հանել «հավանության և վերահրատարակման» բառերը:

Հոդված 15. Օրենքի 15-րդ հոդվածը լրացնել 2-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Ռազմական արտադրանքի ազգային ստանդարտների համար կիրառվում է «ՀՍՏ Ռ» դասիչը: «Հայաստանի ռազմական ազգային ստանդարտ» անվանումը և «ՀՍՏ Ռ» հապավումը պաշտպանվում են հեղինակային իրավունքների մասին օրենսդրությամբ և չեն կարող կիրառվել այլ տեսակի փաստաթղթերի համար:»

Հոդված 16. Օրենքի 15.2-րդ հոդվածի 1-ին մասում «ընդունում» բառը փոխարինել «հաստատում» բառով:

Հոդված 17. Օրենքը լրացնել 15.3-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«***Հոդված 15.3. Տեխնիկական պայմաններ***

1. Տեխնիկական պայմանները մշակում, հաստատում, դրանցում փոփոխություններ կատարում, չեղյալ են հայտարարում իրավաբանական անձինք և (կամ) անհատ ձեռնարկատերերը:

2. Տեխնիկական պայմանները և դրանց փոփոխությունները ենթակա են փաստաթղթային փորձաքննության և հաշվառման Ստանդարտացման ազգային մարմնում՝ համաձայն ստանդարտացման գործող կանոնների և ուղեցույցների:

3. Տեխնիկական պայմանները և դրանց փոփոխությունները փաստաթղթային փորձաքննության ներկայացնելիս՝ ելնելով անհրաժեշտությունից, հայտատուն ներկայացնում է նաև համապատասխան պետական մարմնի կամ ոլորտային կազմակերպության եզրակացությունը (համաձայնեցումը):»:

Հոդված 18. Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 1)-ին կետում «կանոնակարգերով» բառից հետո լրացնել «կամ նորմատիվ իրավական ակտերով» բառերը:

Հոդված 19. Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 6)-րդ կետում «ընդունում» բառից հետո լրացնել «, գործողության մեջ դնում» բառերը:

Հոդված 20. Օրենքի 19-րդ հոդվածի.

1) 1-ին մասի.

ա. 1)-ին կետում «ստանդարտացման ամենամյա պետական» բառերը փոխարինել «պետական ստանդարտացման ամենամյա» բառերով:

բ. 3)-րդ կետում «մուծումը» բառը փոխարինել «վճարումը» բառով:

2) 2-րդ մասի 3)-րդ կետում «սերտիֆիկացումից» բառը փոխարինել «համապատասխանության գնահատումից» բառերով:

Հոդված 21.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ենթաօրենսդրական իրավական ակտը հաստատվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ ամսվա ընթացքում:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-293-07.06.2022-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	1-ին հոդված	1.Նախագծի 1-ին հոդվածում «մասում» բառը փոխարինել «մասի» բառով, 2. 1-ին հոդվածում կետերը շարադրելիս կետերի համարակալումը ուղղել, 1-ին և 2-րդ կետերում պահպանել դասական թվականների գրելաձևի կանոնները, նույնը վերաբերվում է նախագծի ամբողջ տեքստին:	Ընդունվել է 1-ին հոդվածում կետերի համարակալումը փոխվել է:	Ընդունվել է
		1-ին հոդվածի 6-րդ կետ	3. 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «9)-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1)-ին և 9.2)-րդ կետերով»: 4. Օրենքի ողջ տեքստում առկա չէ որևէ դրույթի ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարի վերաբերյալ, Օրենքում կիրառվում է «ստանդարտացման ազգային մարմնի տնօրեն» եզրույթը: Օրենքի և Նախագծի վերլուծությունից հասկանալի չէ՝ արդյոք «ստանդարտացման ազգային մարմնի տնօրեն» և «ստանդարտացման ազգային մարմնի ղեկավար» եզրույթները նույն միտքն են արտահայտում, թե ոչ:	Ընդունվել է Նախագծի 1-ին հոդվածի 6-րդ կետը ներկայացվել է նոր խմբագրությամբ»	Ընդունվել է

2.	ՀՀ կառավարություն	4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածում «մասում» բառը փոխարինել «մասի» բառով, հանել «սույն» բառը, իսկ «բառերից» բառը փոխարինել «բառից» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	ՀՀ կառավարություն	6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածը շարադրել նոր հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 6. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ 1. «Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման բնագավառում պետական քաղաքականությունը մշակում է լիազորված պետական մարմինը:»:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	7-րդ հոդված	Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով սահմանվում է, որ «լիազորված պետական մարմին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմին»: Այսպես՝ վերը մեջբերված դրույթից բխում է, որ Օրենքում կիրառվող հիմնական հասկացություններից է «լիազորված պետական մարմին» եզրույթը, որն իր մեջ արդեն իսկ ներառում է «լիազորված պետական կառավարման մարմին» եզրույթը: Հետևաբար հասկանալի չէ Նախագծի 7-րդ հոդվածով կատարվող լրացման նպատակը, ինչպես նաև Օրենքում «լիազորված պետական մարմին» և «լիազորված պետական կառավարման մարմին» եզրույթների միաժամանակյա կիրառումը:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	ՀՀ կառավարություն	7-րդ հոդվածից հետո լրացված նոր 8-րդ հոդված	Նախագիծը լրացնել նոր 8-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 8. «Օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածներում «լիազորված պետական կառավարման մարմին» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «լիազորված պետական մարմին» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով»:»	Ընդունվել է: Ըստ այդմ հոդվածների համարակալումը փոխվել է:	Ընդունվել է
6.	ՀՀ կառավարություն	8-րդ հոդված (լրամշակված 9-րդ հոդված)	Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ կետում «3.1» թվի փոխարեն շարադրել «3.1-ին» թիվը:	Ընդունվել է	Ընդունվել է

7.	ՀՀ կառավարություն	9-րդ հոդված (լրամշակված 10-րդ հոդված)	1. Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ կետում «մասում» բառը փոխարինել «մասի» բառով, 2-րդ կետի ենթակետերի համարակալումը ներկայացնել այբբենական կարգով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները: 2.Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ՝ փոփոխված «ե.» ենթակետով Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող նոր՝ 20-րդ կետով Ստանդարտացման ազգային մարմնի համար սահմանվում է նոր իրավասություն՝ այն է. «իրականացնում է տեխնիկական պայմանների և դրանց փոփոխությունների փաստաթղթային փորձաքննություն և հաշվառում»: Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ՝ դարձրած «ե.» ենթակետով Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետում «, տեխնիկական պայմանների, դրանց փոփոխությունների նախագծերի» բառերի լրացման արդյունքում ստացվում է. «Ստանդարտացման ազգային մարմինը. (...) կազմակերպում է միջազգային և տարածաշրջանային ստանդարտների, տեխնիկական պայմանների, դրանց փոփոխությունների նախագծերի փորձաքննություն»: Վերոնշյալ երկու լրացումները համադրելու արդյունքում առաջարկում ենք համապատասխան լրացումները կատարել մեկ կետի, այն է՝ Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ կետի 9-րդ՝ փոփոխված «ը.» ենթակետով Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող նոր՝ 20-րդ կետի շրջանակում: 3. Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ կետի 9-րդ	Ընդունվել է Ընդունվել է Համապատասխան փոփոխություն է կատարվել Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ՝ փոփոխված «ե.» ենթակետում: Կատարված փոփոխության արդյունքում Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ կետի «ը.» ենթակետով լրացվող «20)» կետը հանվել է: «ը» ենթակետից հանվել է «Հայաստանի Հանրապետություն» բառերը:	Ընդունվել է Ընդունվել է Ընդունվել է

			փոփոխված «ը.» ենթակետով նախատեսվում է Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ 18-րդ կետով, որի համաձայն՝ Ստանդարտացման ազգային մարմինը «հաստատում, հրապարակում և լիազորված պետական կառավարման մարմին է ներկայացնում հաշվետվություն Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ամենամյա ծրագրի կատարման վերաբերյալ»: Նշենք, որ «Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ամենամյա ծրագիր» եզրույթ Օրենքով չի կիրառվում:		
8.	Կառավարություն	12-րդ լրամշակված 13-րդ հոդված	Նախագծի 13-րդ հոդվածով Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում կատարվող լրացման արդյունքում այն ունենում է հետևյալ տեսքը. «կազմակերպության ստանդարտները և տեխնիկական պայմանները»: Այսպես՝ Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը նոր խմբագրությամբ շարադրելու արդյունքում ստացվում է, որ տեխնիկական պայմանը կազմակերպության ստանդարտի տեսակ է: Այսինքն՝ «կազմակերպության ստանդարտ» եզրույթն իր մեջ ներառում է «տեխնիկական պայմաններ» եզրույթը, հետևաբար «կազմակերպության ստանդարտները» եզրույթից «տեխնիկական պայմանները» եզրույթը «և» շաղկապով անջատելու անհրաժեշտությունը բացակայում է:	Ընդունվել է Փոփոխության արդյունքում «և» շաղկապը հանվել է, իսկ «տեխնիկական պայմանները» բառերը ներառվել են փակագծերի մեջ:	Ընդունվել է
9.	Կառավարություն	14-րդ հոդված լրամշակված 15-րդ հոդված	Այս դրույթի առնչությամբ անհրաժեշտ է անդրադառնալ Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասին, որը սահմանում է. «Ազգային ստանդարտների համար կիրառվում է «ՀՍՏ» դասիչը: «Հայաստանի ազգային ստանդարտ» անվանումը և «ՀՍՏ» հապավումը պաշտպանվում են հեղինակային իրավունքների մասին օրենսդրությամբ և չեն կարող	Ընդունվել է հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ:	Ընդունվել է

			կիրառվել այլ տեսակի փաստաթղթերի համար»: Կարծում ենք՝ նպատակահարմար կլինի սահմանել դրույթ առ այն, որ ռազմական արտադրանի ազգային ստանդարտների համար կիրառվող անվանումն ու դասիչը ևս պաշտպանվում են հեղինակային իրավունքների մասին օրենսդրությամբ և չեն կարող կիրառվել այլ տեսակի փաստաթղթերի համար:		
10.	Կառավարություն	16-րդ հոդված լրամշակված 17-րդ հոդված	Օրենքի 15.2-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Կազմակերպության ստանդարտները չպետք է հակասեն տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջ- ներին »: Նախագծի 17-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 15.3-րդ հոդվածի 2-րդ մասով նույնական կարգավորում է նախատեսված տեխնիկական պայմանների համար: Տեխնիկական պայմանները կազմակերպության ստանդարտ են համարվում, հետևաբար տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին կազմա- կերպության ստանդարտների համապատասխանության կանոնն իր մեջ կլանում է նաև տեխնիկական պայմանների՝ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջ- ներին չհակասելու հրամայականը:	Ընդունվել է Կատարված փոփոխության արդյունքում 2-րդ մասը հանվել է, 1-ին մասի ողջ տեքստը ներկայացվել է նոր խմբագրությամբ՝ բաժանվելով «1-ին ,2-րդ և 3-րդ» մասերի, ինչպես նաև 2-րդ մասում «ստանդարտացման» բառից առաջ կիրառվող «գործող» բառը տեղափոխել «ստանդարտացման» բառից հետո:	Ընդունվել է
11.	ՀՀ կառավարություն	20-րդ և 21-րդ հոդվածներ	Առաջարկում ենք միավորել 20-րդ և 21-րդ հոդվածները, Նախագծի 21-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը: Նախագծի 21-րդ հոդվածը սահմանում է. «Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց 1 ամսվա ընթացքում Լիազորված պետական կառավարման մարմինը հաստատում է սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորում- ները»:	Ընդունվել է	Ընդունվել է

			Նախագծի 21-րդ հոդվածով անհրաժեշտ է սահմանել բոլոր այն մարմինները, որոնց Նախագծով վերապահվել է նոր ենթաօրեսնդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու իրավասություն: Նախագծի 21-րդ հոդվածում նշված է միայն Լիազորված պետական մարմինը, մինչդեռ Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ կետով Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 3.1-ին կետով սահմանվում է Կառավարության՝ նոր ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու վերաբերյալ կարգավորումներ: Առաջարկում ենք շտկել հղումը՝ ընդգրկելով Նախագծի բոլոր դրույթները, որոնք պարունակում են նոր ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու համար լիազորող նորմեր, ինչպես նաև սահմանել ուժի մեջ մտնելու այլ ժամկետ այն նորմերի համար, որոնց գործելը պայմանավորված է նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունմամբ: Միաժամանակ առաջարկում ենք Նախագծի 21-րդ հոդվածում «մտնելուց» բառից հետո լրացնել «հետո» բառը:		